կարմիր վանքը, ջուրը դուրս կտայ։

Այս տեղ է Մեղանքար կոչուած ժայռն, որ քրդեր Կեավրէ քաֆիրան (կռապաշտի քար) կասեն, հայք ևս կասեն թէ կռատեղի եղած է։

Այժմ այս ջրի վերան 50 շէն և 200 աւերակ ջրաղաց և ցաւրծեց կայ։

Բրճոի կեռուկից յԱպահունիս գնալու համար Խասուրէն 2 ½ ժամէն Բրճոյի կիրճն, ուստի Անդարի արևմտեան մասով Խունտին, Խուպք, Ամար, Ղարղալիս փոքր, Խարախաչ (սև խաչ), Քէսուկ, Հասան փաշա. Ցուկնուկ, Նորատին, Ղասըմիկ, Սուլթանլու. ուսսի Արածանին անցնելով Ռստամ կեռուկ, Խոթանլու ևն։

Մանազկերտի Հասան-Փաշա գիւղին մէջ որպէս կը յիշուէր Խչոն, Բանանիշ գիւղին մէջ ևս անուանի էր Քօսա Կիգոն, որ ունէր մեծ հարստութիւն։ Սա գնած էր այս գիւղը Նոյ բէկի ցեղից, գիւղացիքը լաւ կը կառավարեր, անգործ մարդ մի պիտի չլինէր. նորա ժամհարն և քզիրն կիներ էին, սա իւր դուռն ունէր 100 ցորեանի հոր, իւրաքանչիւր հորը 100 սոմար ցորեան կը տանէր, այժմ նորա հորերու մէջ կը գտնուին գութանի շղթայ. կարասներով իւղ, և ցորեան որ փտած են։

Մանազկերտ պատմական մեծ անցքեր անցած են, որոյ մէջ և շուրջն որպէս կը պատմեն, կը տեսնուին բազմաթիւ հնութիւններ, արձանագրութիւններ ևն. նաև գիւղօրէից մէջ գտնուած գերեզմանատուններ, հին եկեղեցիներն ու վանքերը տեսնողներն հիանալով կը պատմեն, զորս առանձին գրի առնել արժան է։